# ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

**Ելենէնդորֆ**.—Գտնւում է Գանձակից դէպի հարաւ, մօտ 7 վերստ հեռու, մի հարթութեան վրայ, Գանձակ գետի աջ կողմում։ Հինգ կանոնաւոր, լայն և ուղիղ փողոցներ ձգւում են գրեթէ մի վերստ երկարութեամբ, որոնց երկու կողմը տընկուած կաղամախի, բարտի և սօսու ծառերը մի առանձին գեղեցկութիւն են տալիս գաղութին։ Գրեթէ կենդրոնում բարձրանում է գոթական ճաշակով սրբատաշ կարմիր քարից շինած եկեղեցին, որի մի կողմը գտնւում է պետական երկդասեան, երկսեռ դպրոցը, իսկ միւս կողմում մի գեղեցիկ, երկյարկանի տուն, փոքրիկ պարտիզով, որ համայնքը յատկացրել է պաստորի բնակութեան համար։ Եկեղեցու առաջ տարածւում է մի բաւական ընդարձակ հրապարակ, նոյնպէս կաղամախի ծառերով զարդարուած։ Տները մի, երկու և մինչև անգամ եռյարկանի են, իրենց առաջը ունենալով ընդարձակ բակեր և փոքրիկ բանջարանոցներ։

Գաղութում կայ բաւական թւով գեղեցիկ, հարուստ խանութներ, արհեստանոցներ, գերմանական և ռուսաց գինուորական կլուբներ, մի հիւրանոց, հասարակաց այգի, պոստ և հեռագրատուն և այլն. բնակիչները, թւով 249 տուն՝ 735 ար. 722 իգական, իմիասին 1457 հոգի, վիւրտեմբերգցի գերմանացիներ են, և 50 տուն, 116 ար. 44 իգ. իմիասին 160 հոգի հայեր, կան նաև երկու տուն ռուսներ և երկու տուն թուրքեր։

Հայերն ունին մի շարժական խորան մի դահլիճի մէջ, ուր թէև իրաւունք չունին պատարագ մատուցանելու, բայց կարող են ժամասացութիւն և զանազան ծիսակատարութիւններ կատարել։

Գերմանացիները գլխաւորապէս պարապում են երկրագործութեամբ, այգեպանութեամբ, գինեգործութեամբ և գա-

րեջրի պատրաստութեամբ, հայերը՝ բացառապէս առևտրով և արհեստներով։

Այս գաղութում նշանաւոր է Ֆորէր գերմանացին, որ միլիոնատէր է, ունի բաւական թուով այգիներ, արտեր, ընդարձակ արօտատեղիներ, ձիաբուծարան, գինու և գարեջրի գործարաններ և այլն։

Այս գաղութում 25 տարուց ի վեր մնում է մի գունդ զօրք, ցրուած գերմանացիների տներում։

ԱՆՆԵՆՖԵԼԴ.—Գտնւում է Շամքոր գետից 8 վերստ դէպի հիւսիս, մի ընդարձակ դաշտի վրայ։ Ուղիղ, կանոնաւոր փողոցները բարձր ծառերով, գեղեցիկ տները ընդարձակ բակերով ալտեղ էլ գիւղին բաւական լաւ տեսք են տալիս։ Գաղութի մօտ երևում են մի շարք կուրգաններ, որոնք դեռ ևս պեղուած չեն։ Այս գաղութը միանգամայն նման լինելով Ելենէնդորֆին, առանձին յիշատակելու բան չունի. այս միայն կարելի է ասել, որ սա այնքան յառաջադիմած չէ, որքան Ելենէնդորֆը, որովհետև կենդրոնից աւելի հեռու է գտնւում։ Բնակիչները 116 տուն են, 231 ար. 261 իգ. իմիասին՝ 492 հոգի, որից 97 տունը, 201 ար. 236 իգ. գերմանացի են, 16 տունը, 23 ար. 20 իգ. հայեր. 1 տունը, 3 ար. 4 իգ. ռուս, 1 տունը, 2 ար. 1 իգ. վրացի և 1 տունը 2 ար. պարսիկ։